

ԶՐՈՒՅՑ

Գ. ԳԱԼՍՏՅԱՆԸ՝ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի հեռուգրույցում Արցախի «Արդարություն» խմբակցության ղեկավար Գալստյանը հայտարարել է, որ նախագահ Սամվել Շահրամանյանի ստորագրած թուղթը Արցախի իբրև լուծարման մասին, առաջինը է, ոչ ոք չի տեսել այն, ուստի հանրապետությունը հռչակված Արցախի Հանրապետությունը չի կարող մեկ հոգու ստորագրմամբ լուծարվել:



Մեզ հետ գրույցում Արցախի ԱԺ պատգամավոր Գալստյանը նաև հայտարարեց, թե Սամվել Բաբայանն իրականում կողմ է եղել նոր նախագահի ընտրությունների անցկացմանը, իսկ հիմա հայտարարում է, թե դա հիմք է եղել, որ Ադրբեյջանը Արցախի դեմ ռազմական ագրեսիա իրականացնի:

«Պարոն Գալստյան, ի՞նչ էր վերջին օրերին կատարվում Արցախում: Որպես խմբակցության ղեկավար՝ վստահաբար մասնակցել եք բոլոր քննարկումներին, հանդիպումներին. իրադարձությունների նման զարգացում սպասվում էր, եւ, ի վերջո, Ձեր վերլուծությունները ի՞նչ են ստում, ո՞վ էր այս իրավիճակի մեղավորը:

«Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը եւ այն, որ թե՛ Հայաստանի, թե՛ Արցախի իշխանությունները միշտ մեղավոր էին փնտրում եւ, նմանատիպ հարցերում, չգիտես՝ ինչու, իրենք, լինելով իշխանություն, վեկտորները ուղղում էին ընդդիմության վրա, այսօր ես հնարավոր է նման թեզեր կան, որ Սամվել Շահրամանյանի ներկայացումը որպես ընդդիմության թեկնածու այդքան էլ այդպես չէ, եւ այդ քննարկումները սկսվեցին հենց այն ժամանակ, երբ Ազգային ժողովի նախագահը հրաժարական ներկայացրեց, եւ Արայիկ Յարուբյանը ստեղծեց նման ֆոն, թե Արցախի նախագահի պաշտոնը զբաղեցրել է

ընդդիմությունը: Նա եկավ Ազգային ժողով, ներկայացրեց, որ Դավիթ Իշխանյանն իր թեկնածուն է, եւ քաղաքական ուժն է հենց առաջադրել Ազգային ժողովի նախագահի պաշտոնում Իշխանյանին, այլ ոչ թե «Դաշնակցություն» խմբակցությունը, եւ դրանից հետո միայն Արայիկ Յարուբյանը հրաժարական տվեց: Նա նույնպես ներկայացրեց Սամվել Շահրամանյանին՝ որպես իր թեկնածու, եւ դրա համար հենց փորձեցինք միասնություն ապահովել եւ եկանք այն ընդհանուր եզրակացության, որ չորս խմբակցությունները առանձին-առանձին առաջադրեն միեւնույն անձի թեկնածությունը:

Եվ այդպես էլ կատարվեց: Հիմա գործը խմբակցությունը չմիացավ այդ առաջադրմանը, ասեմ ավելին՝ Սամվել Բաբայանը եւս կարող էր լինել այդ ժամանակ նախագահի թեկնածու, ընդամենը մեկ թուղթ էր իրեն պակասում, եւ դատարանն ադեն որոշումը կայացրել էր, եւ այդ թուղթը նա տեսական ժամանակ ուներ՝ ներկայացնելու Ազգային ժողով, որպեսզի հստակ թեկնածու դիտարկվի, սակայն չներկայացրեց: Դա իրենց ցանկությունն է, իհարկե, իրենց որոշումը: Եվ երբ որ իրենց խմբակցության ղեկավարին հարցրին, թե ինչու չեն ներկայացրել, նա շատ հանգիստ պատասխանեց, որ դա իրենց որոշումն է: Այնպես չէ, որ նրան թույլ չեն տվել, որ նա լինի Արցախի Հանրապետության նախագահի թեկնածու, պարզապես նրանք են այդպես որոշել:

Հրույցեց ԶՐՈՒՅՑԻՆ ԱՍՈՒԵՂՅԱՆԸ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻ ՀԵՏ

ԱԺ մարզու իրավունքների դաշնակցության եւ հանրային հարցերի մեջական հանձնաժողովի՝ աղօթինաբար լիազորությունները դադարեցված նախագահ, անկուսակցական դաշնակցության մարզուի Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Արցախից բռնի սեղանակալվածների համար հումանիտար խնդիրների լուծումը դարձել է սեղանների 20-ից սկսած յուրաքանչյուրի օրվա մեծ մասի աշխատանք: Այս առիթով խորհրդարանում կազմակերպել էի հանդիպում հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ու Հայաստանում Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության արտակարգ եւ լիազոր դեսպանի հետ:



Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության արտակարգ եւ լիազոր դեսպան Ն.Գ. պարոն Ջոն Գալագերի հետ:

Ելնելով այս ժողովրդի համար այս ծանրագույն ժամանակաշրջանում առաջացած մի շարք խնդիրներից՝ պատմամշակութային ժառանգության պահպանման, կրոնական կրթողների պաշտպանության եւ այլ հարցերում ունենք բազմաթիվ մտքեր ու գաղափարներ:

Նպատակ ունենք նաեւ աջակցել Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված մեր հայրենակիցներին, նպաստել

նրանց՝ մասնագիտական ոլորտում դրսևորվելուն, մրցունակ դառնալուն, նոր հմտություններ ձեռք բերելուն, նոր միջավայրին ադապտացվելուն, ինչպես նաև բարձր պահել Արցախի հարցը միջազգային հարթակներում տարաբնույթ ծրագրեր իրականացնելու միջոցով: Այս ամենը կյանքի կոչելու համար սկսել ենք հանդիպումների շարք դեսպանների, միջազգային կառույցների ներկայացուցիչների եւ տարբեր մասնագետների հետ:

Արդյունքների մասին հավելյալ կհայտնենք»:

ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՄԱՆ ԳՈՒՅՔ

ՀՀ գլխավոր դատախազությունը «Ապօրինի ծագման գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքը կիրառում է միայն Նիկոլ Փաշինյանի ընդդիմախոսների նկատմամբ: Այդ մասին է վկայում նաև «Ժողովուրդ» օրաթերթի հարցմանն ուղարկված պատասխանը: «Ժողովուրդ» օրաթերթը գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանից խնդրել է գրավոր տրամադրել տեղեկություն, թե 2023 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին ապօրինի գույքի բռնագանձման գործերով ներկա եւ նախկին պաշտոնյաներից ում գույքն է ուսումնասիրության ենթարկվել (ներկայացնել ողջ ցանկը): Ի պատասխան՝ դատախազը հայտնել է, որ «Ապօրինի ծագման գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ դատախազության համանուն վարչությունում «ուսումնասիրությունները սկսելու հանգամանքը, դրանց հիմքերը, ընթացքի վերաբերյալ եւ դրանց արդյունքում ստացված տվյալներն ամբողջությամբ գաղտնի են եւ ենթակա են տրամադրման այլ անձանց՝ միայն ելնելով ապօրինի ծագման գույքի բռնագանձման վարույթի նպատակներից: Հետեւաբար, որոշակի անձանց պատկանող գույքերի նկատմամբ ուսումնասիրության առկայության անհրաժեշտ տվյալներ չեն կարող տրամադրվել»: Այսինքն՝ դատախազությունը գաղտնի է պահում, թե ում ապօրինի ծագման գույքի ծագումնաբանությունն է ուսումնասիրում: Բայց դատելով մեր երկրորդ հարցի պատասխանից՝ դատախազությունը միայն ընդդիմախոս հայացքներ ունեցողների գույքն է ուսումնասիրում, բայց ոչ որեւէ գործող պաշտոնյայի կամ իշխող ԶՊ-ականի: «Ժողովուրդ» օրաթերթի երկրորդ հարցին, թե կոնկրետ որ պաշտոնյաների կամ նախկին պաշտոնյաների գործերով են արդեն հայցեր ներկայացվել դատարաններ (ներկայացնել ողջ ցանկը), դատախազությունը սիրահոժար մի ողջ ցանկ է ներկայացրել. 2023թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հայցադիմումներ են ներկայացվել ընդդեմ հետևյալ պաշտոնատար անձանց (նկատենք, որ բոլորը նախկին պաշտոնյաներ են կամ Նիկոլ Փաշինյանի ընդդիմախոսներ).

1. Միեր Սեդրակյան (Էրեբունու նախկին թաղապետ), 2. Հրայր Թովմասյան (ՍԴ դատավոր), 3. Հովիկ Աբրահամյան (ԱԺ նախկին նախագահ), 4. Վահե Նիկոյան (Երեւանի նախկին փոխքաղաքապետ), 5. Սամվել Ուզունյան (նախկին դատավոր), 6. Արթուր Գեղորգյան (ԱԺ նախկին պատգամավոր), 7. Ռոբերտ Նազարյան (Երեւանի նախկին քաղաքապետ), 8. Արմեն Յարուբյանյան (Էրեբունու նախկին թաղապետ), 9. Զարգանդ Գրիգորյան (Արշալույսի նախկին գյուղապետ), 10. Առաքել Վիրաբյան (Պողոտու նախկին համայնքապետ), 11. Սաշա Յակոբյան (Մասիսի նախկին քաղաքապետ), 12. Ժաննա Հովհաննիսյան, 13. Անուշավան Այվազյան (ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի գործակալության նախկին պետ), 14. Հովիկ Աբովյան (Տավուշի նախկին մարզպետ), 15. Վահագն Վերմիշյան (ՀՀ քաղցինկոմիտեի նախկին ղեկավար), 16. Արման Ղուկասյան, 17. Արամ Սիմոնյան (ԵՊՀ նախկին ռեկտոր), 18. Արամ Վարդանյան, 19. Մանուկ Յակոբյան (Աբովյանի նախկին քաղաքապետ), 20. Անդրանիկ Քասարյան (Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության եւ քաղաքաշինության վարչության նախկին պետ): Ահա նրանք, որոնցով զբաղվում է գլխավոր դատախազը: Եթե նկատեցիք, խոշոր կոռուպցիոներներից գրեթե ոչ ոք չկա այս աղբատիկ ցանկում: Ավելին՝ այս ցանկից Նիկոլ Փաշինյանի վրեժխնդրության հոստ է գալիս, որը սիրով կատարում է գլխավոր դատախազը կամ, որ նույն է, իշխող ԶՊ-ի օմբուդսմենը:

ՄԱԱԿԱՇՎՐԻՒՆ՝ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ



«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Կրաստանի նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլին բանտից ազատեցին ԳՀ Կրաստանի Սիկոլ Փաշինյանին...

ՎԱՍՈՒԼԻՍ ԸՆՅԱՍՏԱՆԻ ԱՐԺԵՂԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԿԱՊԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տպագրության փոփոխություններով Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության (ՖՄԿ) գլխավոր ֆարսուղար Լուիզ Մուշեղյանի հետ համատեղ առաջարկում է ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը...



Նրա խոսքով՝ երկխոսության դիմադրական վկայում է ՖՄԿ-ի և Հայաստանի միջև բարձր մակարդակի հարաբերությունների և սերտ համագործակցության մասին...

ված իրավիճակում Միրզոյանն ընդգծեց կազմակերպության կողմից Հայաստանի հետ համագործակցության կարևորությունը...

աժամանակ դա ի ցույց դրեց տարածաշրջանում ուժի կիրառման գործելակերպի ուղղակի կամ անուղղակի խրախուսման վտանգավորությունը...

ՕՐԿԱ ԽՃԱՆԿԱՐ ԱՅՑԵԼԵԼ Ե ԸՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՐԵԱ

Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը ժամանել է Փենսիլանիա: Երկօրյա այցի ընթացքում Լավրովը հանդիպում կունենա հյուսիսկորեացի իր պաշտոնակցի հետ...

Սեյ ամիս առաջ Հյուսիսային Կորեայի առաջնորդ Կիմ Չեն Ընը պաշտոնական այցով ժամանել էր Ռուսաստան...

տատվել է կողմերի հաշտության համաձայնությունը, որով Հայաստանի Հանրապետությանն է վերադարձվելու 45,100,000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով գույքեր...

ԸՆԳՈՒՆԵԼ Ե ԴԵՍՊԱՆԻՆ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է Հայաստանում Լիտվայի արտակարգ և լիազոր դեսպան Անդրիաս Պուլոկասին...



ՄԱՔՍԱՎՅԻՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ Երևանում գրանցված կազմակերպությունը երրորդ երկրից ադրանքներ ներմուծելիս մաքսային ձեռակերպումները կարող է առյուժիբ իրականացնել Սիսիանում:
Կարո Զարոբյանյան (38 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր մաքսային պետական կոմիտեի 2003 թվականի հուլիսի 4-ի N03/42-Ն հրամանի 1-ին կետի համաձայն՝ կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների ել տրանսպորտային միջոցների մաքսային ձեռակերպումների իրականացման վայրեր են այն տարածաշրջանային մաքսատները, որոնց գործունեության գոտին ընդգրկում է տվյալ կազմակերպության գտնվելու վայրը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի N 865-Ն որոշման 2-րդ կետի գ) ենթակետի համաձայն՝ Արարատյան տարածաշրջանային մաքսատան գործունեության տարածք է հանդիսանում Երեւանը, Հայաստանի Հանրապետության Արարատի, Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի եւ Գեղարքունիքի մարզերի վարչական տարածքները, ուստի Երեւանում գրանցված կազմակերպության կողմից ապրանքների ներմուծման դեպքում մաքսային ձեռակերպումների իրականացման վայր է համարվում Արարատյան տարածաշրջանային մաքսատունը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«Ժողովուրդ». Նշենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է թույլատրել «Վերամշակում» մաքսային տարածքում՝ մաքսային ընթացակարգով հայտարարագրված ապրանքների բացթողնումը կամ ներմուծված ապրանքների նկատմամբ կիրառված՝ «Վերամշակում» մաքսային տարածքում՝ մաքսային ընթացակարգի ժամկետի երկարաձգումը միայն մեկ անգամ՝ մինչև երկու տարին չզերազանցող ժամկետով:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Եթե ԱՊՊԱ հասուցման գործընթացում ադախովագրական ընկերության կողմից հասուցման ժամկետի խախտում է եղել, ադա ի՞նչ դատաստանացվության միջոցներ են սահմանված:
Ռիմա Մնացականյան (38 տարեկան)




ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ ապահովագրական հատուցման գործընթացի կարգավորման՝ ներառյալ փորձաքննությունների, նախնական գննության գործընթացի իրականացման, ապահովագրական հատուցման վճարման եւ ծանուցումների իրականացման համար «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ -ի RL 1-001 կանոններով (ԱՊՊԱ Ընդհանուր պայմաններ) նախատեսված ժամկետների խախտման դեպքում ապահովագրական հատուցում վճարելու վերաբերյալ դիմում ներկայացրած անձն իրավունք ունի դիմում ստացած ապահովագրական ընկերությունից պահանջել յուրաքանչյուր կետանցված օրվա համար վճարել տույժ՝ օրենքով սահմանված չափով, իսկ օրենքով համապատասխան խախտման համար տույժ սահմանված չլինելու դեպքում՝ տուժողի կրած տվյալ տեսակի վնասի համար նախատեսված ապահովագրական գումարի 0,1 տոկոսի չափով, որը չի կարող պակաս լինել հիսուն հազար ՀՀ դրամից, եթե միեւնույն հատուցման գործընթացում սույն կանոններով նախատեսված բոլոր գործողությունների համար սահմանված ժամկետների կետանցված օրերի քանակը 7 եւ ավելի է:

Ֆինանսական համակարգի հաշտարար

«Ժողովուրդ». Ի դեպ, միեւնույն համադրելի ժամանակահատվածում սույն կանոններով նախատեսված տարբեր գործընթացներ կետանցվելու դեպքում այդ ժամանակահատվածի համար տույժերը հաշվարկվում են մեկ անգամ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնը, մասնավորի հետ համագործակցությամբ, 2023-ի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին պեղումներ է իրականացրել «Ղալմայի այգիներ» անվամբ հայտնի հնավայրի՝ 19-րդ դ. առաջին քառորդում կառուցված հնձաններից մեկում (հնագետ՝ Արման Նալբանդյան), որոնց արդյունքում բացվել է անխաթար մնացած մշակութային շերտ: Առաջիկայում նախատեսվում են հնձանի վերականգնման աշխատանքներ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել



«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից


«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	+4 + 8 +10 + 14	Արարատ	+10 + 13 +15 + 17
Կոտայքի լեռներ	+5 + 8 +10 + 14	Արմավիր	+10 + 12 +15 + 17
Կոտայքի նախալեռներ	+9 + 11 +12 + 14	Վայոց ձորի լեռներ	+1 + 3 +11 + 15
Գեղարքունիք	+3 + 8 +7 + 12	Վայոց ձորի նախալեռներ	+3 + 6 + 10 +20 + 24
Լոռի	+4 + 9 +10 + 13	Սյունիքի հովիտներ	+10 + 13 +20 + 22
Տավուշ	+7 + 10 +11 + 15	Սյունիքի նախալեռներ	+3 + 8 +9 + 14
Արագածոտնի լեռներ	+1 + 5 +9 + 13	ԼՂՀ	+9 + 12 +15 + 19
Արագածոտնի նախալեռներ	+8 + 10 +12 + 15	Երեւան	+5 + 10 +18 + 21

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22^ա/3, հեռ՝ 010 54-64-23
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության 18.10.2023

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: